# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառամուտ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ. Անտառամուտ, 1փ. 3շ., Հեռ. 093-61-28-04,
antaramut .lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2020 թվականի N 04-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 15.01.2020թ. թիվ 01/107.4/00179-2020 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

Որոշում եմ.

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառամուտ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների>> պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառամուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Անտառամուտ համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
Անտառամուտ համայնքի ղեկավարի
2020թ
Թիվ 04-Ա որոշման

# Պ Լ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | I ԱԻՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | |
| | 1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ | | | | | |
| 1.1 | ՀՀ վարչապետի 2014թ. սեպտեմբերի 26-ի N 934-Ն որոշման համաձայն՝<br>Մասնակցություն Լոռու մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության, մշակման և ճշգրտման, ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | հուլիս | Համայնքի ղեկավար | Համայնքի ՔՊ ղեկավար կազմ, տարահանման հանձնաժողով | | |
| 1.2 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպա-նության միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Անտառամուտ | Տարվա ընթացքում | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

| Հ/հ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | համայնքի տարածքում հաշվառված ինժեներական տեխնիկայի և տրանսպոր-տային միջոցների՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը | | | | | |
| **II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **2. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 2.1 | Անտառամուտ համայնքի տարածքում գործող փրկարարական ուժերի գույք-սարքավորումների, տեխզինվածության և անձնակազմի հաշվառում և զեկույցի ներկայացում | 04.12 | Համայնքի ղեկավար | Արագ արձագանքման թիմի ղեկավար | | |
| **3. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 3.1 | «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառամուտ համայնքի բնակ-չության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Անտառամուտ համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ | մինչև 25.12 | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ Ռ.ԳԵՎՈՐԳՅԱՆ